



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱԿՆԻ ՏՆՈՐԵՆԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 25 Մարտի յետմիջօրեին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր Տ. Սուլշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց Հայաստանի Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէն Տիար Հայկ Դեմոյեանի այցելութիւնը: Հայրենի հիւրին կ'ընկերանային ծանօթ մտաւրական ու Հայ Դատի ծառայողներէն Տոքթ. Ռուբիլա Փիրումեան եւ «Եսկիճեան» թանգարանի վարիչ Տիկին Մակի Մանկասարեան:

Հայկ Դեմոյեան Առաջնորդ Սրբազանին հաղորդեց Զալիֆորնիա իր այցելութեան շարժառիթները, որոնց կարգին՝ Ցեղասպանութեան նուիրուած բանախօսութիւն եւ իր հեղինակած գիրքին՝ «Սպորթն ու Մարմակրթութիւնը Օսմանեան Կայսութիւնում» հատորին ներկայացումը: Ան այս առիթով նաեւ հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց իր ղեկավարած թանգարանի աշխատանքներուն, ծրագիրներուն ու անոնց ընդարձակման կարիքներուն մասին:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հայրենի հիւրին ու Ցեղասպանութեան թանգարանին աշխատանքը, Վեր առնելով հայութեան իրաւունքներուն ուրացման ու դրժումին դեմ փաստագրական միջոցներով հակադարձելու կարեւորութիւնը: Ան յաջողութիւն մաղթեց Հայկ Դեմոյեանի ու գործակիցներուն, իրենց տարած երախտաշատ աշխատանքին համար, միաժամանակ մաղթելով, որ ծրագիրները ապահովեն իրագործման միջոցները:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուերներ յանձնեց յարգելի հիւրերուն:

PRELATE WELCOMES DIRECTOR OF THE ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE OF YEREVAN

On Friday, March 25th, 2011, H.E .Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Hayk Demoyan, Director of the Armenian Genocide Museum-Institute in Yerevan. Dr. Rubina Peroomian and Mrs. Maggi Mangassarian, Director of the Eskijian Museum, accompanied Mr. Demoyan.

Mr. Demoyan reported that he is currently in Los Angeles to present a series of lectures on his latest book *Armenian Sports and Athleticism in the Ottoman Empire* and also on the subject, "The Armenian Genocide: Centennial Anniversary and Commemoration Strategies". He also spoke of his work as director of the Genocide Museum.

The Prelate highly commended Mr. Demoyan for his service and wished him success in his future endeavors.

The meeting concluded with the Prelate presented the guests with mementos.